ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ УПРАВЛЕНИЕ

N 01-121
«04» 11 2016թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2016 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ընդունված որոշումը, Համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրություններ չկան:

Առդիր 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ա

«13» 10 2016թ. գ.Ոսկեհատ

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի բնակիչներ Հովհաննես Գասամանյանը (ծնված 14.01.1956թ.), Մարի Ղազարյանը (ծնված 12.10.1957թ.), Ծաղիկ Գասամանյանը (ծնված 15.01.1983թ.), Նարեկ Գասամանյանը (ծնված 22.05.1991թ.) դիմել է, գ. Ոսկեհատ Բարեկամության փողոցի թիվ 45 հասցեում գտնվող, իրեն պատկանող օրինական 0.07 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքի վերականգնելու խնդրանքվ::

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում *իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների* կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Արմավիրի մարզի, Ոսկեհատ համայնքի Բարեկամության փող. թիվ 45 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Հովհաննես Գասամանյանը (ծնված 14.01.1956թ.), Մարի Ղազարյանը (ծնված 12.10.1957թ.), Ծաղիկ Գասամանյանը (ծնված 15.01.1983թ.), Նարեկ Գասամանյանը (ծնված 22.05.1991թ.) գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.07 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող

0.0096 հա հողամասի բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն 93.1քմ.՝ կառուցված 1955թ., անասնաշենք 21.2քմ.՝ կառուցված 1990թ., ավտոտնակ 24.2քմ.՝ կառուցված 1990թ, սան. հանգույց 8.4քմ.՝ կառուցված 1990թ, պարիսպ 1.1քմ. կառուցված 1987թ.) նկատմամբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում:Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենքի-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Հովհաննես Գասամանյանը (ծնված 14.01.1956թ.), Մարի Ղազարյանը (ծնված 12.10.1957թ.), Ծաղիկ Գասամանյանը (ծնված 15.01.1983թ.), Նարեկ Գասամանյանը (ծնված 22.05.1991թ.), սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. 0024-0046 ծածկագրին տալ Բարեկամության փող. թիվ 45 հասցեն:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ